ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՏԻԿԻՆ Ա. ԱՍԱՏՐՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Ասատրյան.

Ի պատասխան Ձեր 09.04.2021թ. գրության՝ Երևան քաղաքի փողոցներում անօրինական կառուցված արհեստական անհարթությունների վերաբերյալ, տեղեկացվում է, որ արհեստական անհարթությունները կառուցվել են հիմնականում դեպի դպրոցներ և մանկապարտեզներ տանող ճանապարհահատվածներում՝ տրանսպորտային միջոցների արագընթաց երթևեկությունը կարգավորելու, ինչպես նաև հետիոտնի անվտանգ անցուդարձն ապահովելու նպատակով՝ ՀՀ կառավարության 10.01.2008թ. հ.113-Ն որոշման պահանջներին համապատասխան:

Վարչական շրջանների տարածքներում ասֆալտապատման աշխատանքներ իրականացնելիս հեռացվում են այն արհեստական անհարթությունները, որոնք չեն համապատասխանում վերը նշված որոշման պահանջներին:

Միաժամանակ տեղեկացվում է, որ 2020-2021թթ. ընթացքում իրականացված և իրականացվող ասֆալտբետոնյա ծածկի վերանորոգման աշխատանքներին զուգընթաց, Արաբկիր վարչական շրջանի Հ.Էմինի փողոցում՝Վ. Փափազյան փողոցից դեպի Գյուլբենկյան փողոց տանող ճանապարհահատվածում, ապամոնտաժվել են բնակիչների կողմից անօրինական կառուցված արհեստական անհարթությունները և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը դիմել է ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայություն՝ փողոցի վերը նշված հատվածն արագությունը սահմանափակող ճանապարհային նշաններով կահավորելու առաջարկով:

Արհեստական անհարթություններ են ապամոնտաժվել նաև Արաբկիր վարչական շրջանի Արղության փողոցում և նրբանցքում:

Իրականացված գույքագրման արդյունքում արհեստական անհարթություններ են հայտնաբերվել նաև Կենտրոն վարչական շրջանի Արամի, Հին Երևանցու, Վերֆելի, Լուսինյանց, Սարալանջի փողոցներում: Ձեռնարկվում են միջոցներ դրանց հետագա կարգավիճակը որոշելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ